ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«24» դեկտեմբերի 2020 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 23 (քսաներեք) անդամներ՝

Հ.Կարապետյանը, Լ.Խաչատրյան, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյան, Վ.Հունանյանը, Կ.Միքայելյանը, Տ.Փանոսյանը, Վ.Եդիգարյանը, Ա.Գրիգորյանը, Գ.Սարգսյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը, Ա.Աղանյանը, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Ա.Խաչատրյանը, Գ.Մաթևոսյանը, Հ.Պողոսյանը, Ա.Ղարաղազարյանը, Ա.Առաքելյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ աշխատակազմի քարտուղարի ժ/պ Կ.Բադալյանը:
Նիստը վարում է Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռուբեն Սանոյանը:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԺԱՄԸ 12:00-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ռ.ՍԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 20
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի ժամը 12:00-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 234-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ.

կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
Համայնքի ավագանու անդամ Լ.Բարսեղյանը և Ա.Խաչատրյանը քվեարկությանը մասնակցեցին օրակարգի 2-րդ հարցից:
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու (այսուհետ՝ ավագանի) 2019 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 234-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1–ին կետի 1-ին ենթակետի «4 576 450 200 (չորս միլիարդ հինգ հարյուր յոթանասունվեց միլիոն չորս հարյուր հիսուն հազար երկու հարյուր)» թիվը և բառերը փոխարինել «4 607 674 900 (չորս միլիարդ վեց հարյուր յոթ միլիոն վեց հարյուր յոթանասունչորս հազար ինը հարյուր)» թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «5 144 451 000 (հինգ միլիարդ հարյուր քառասունչորս միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար)» թիվը և բառերը փոխարինել «5 175 675 700 (հինգ միլիարդ հարյուր յոթանասուհինգ միլիոն վեց հարյուր յոթանասունհինգ հազար յոթ հարյուր)» թվով և բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի (այսուհետ՝ բյուջե) հավելվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ հատվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4 հավելվածների:

3. Թույլատրել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը առանց ավագանու հաստատման բյուջեում կատարել փոփոխություններ՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման գործընթացով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՈՂ ՖԻԼՄԻ ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ «ՆՎԻՐՈՒՄ» ԳՐՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «X ՖԻԼՄ ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 460 000 (չորս հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Հասմիկ Կիրակոսյանի կյանքի ու գործունեության մասին պատմող ֆիլմի նկարահանման և «Նվիրում» գրքի տպագրման և ծախսերը հոգալու նպատակով:

2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՂԱՎՆԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Աղավնի Բարսեղյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ԴԱՎԹՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Արտյոմ Դավթյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
Որոշումն ընդունվեց
ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՓԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ Արփինե Սահակյանի ընտանիքին որպես դրամական օգնություն հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման առաջին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 194-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի « Ամանորյա տոների կապակցությամբ դրամական օգնություն հատկացնելու մասին» N 194-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում

ա) «250 (երկու հարյուր հիսուն)» թիվը և բառերը փոխարինել՝ «269 (երկու հարյուր վաթսունինը)» թվով և բառերով,

բ) «5 000 000 (հինգ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել՝ 5 380 000 (հինգ միլիոն երեք հարյուր ութսուն հազար)»թվով և բառերով,

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված N2 հավելվածում (այսուհետ՝ N2 հավելված) «5 000 000 (հինգ միլիոն)» թիվը և բառերը փոխարինել՝ 5 380 000 (հինգ միլիոն երեք հարյուր ութսուն հազար)» թվով և բառերով,

3) N2 հավելվածը լրացնել 251-269 տողերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 96-Ա ՈՐՈՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 10-ի «2019 թվականի ընթացքում աշխարհի, Եվրոպայի և Հայաստանի Հանրապետության առաջնություններում առավել բարձր արդյունքների հասած գյումրեցի մարզիկների մարզիչներին դրամական պարգևներ շնորհելու մասին» N 96-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի

ա) 10-րդ կետի «2-րդ կիսամայակ» սյունակում «18.000» թիվը փոխարինել «156.000» թվով,

բ) 11-րդ կետի 3-րդ սյունակը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«

		6.Ավետիսյան Սուրեն	0	36.000

»

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ, ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ

5 (ՀԻՆԳ) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ռազմական գործողություններին մասնակցություն ցուցաբերած, վիրավորված ու բուժման մեջ գտնվող սոցիալապես անապահով թվով 5 (հինգ) զինծառայողների ընտանիքներին, որպես դրամական օգնություն կանխիկ հատկացնել ընդամենը 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ յուրաքանչյուրին՝ 50 000(հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ համաձայն հավելվածի:
2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2020 թվականի բյուջեի 10/7/1 գործառնական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. **2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼՅԱՆ ՔԱՌՕՐՅԱ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՍՕՐՅԱ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՀՎԱԾ (ՄԱՀԱՑԱԾ), ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԱՆՀԱՅՏ ԿՈՐԱԾ ԵՎ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ ԿԱՄ ՄԱՀԱՑԱԾ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՆՁԱՆՑ (ԿԱՄ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ) ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ՝ՄԻՆՉԵՎ ԱՅԴ ԱՆՁԱՆՑ ԶԱՎԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՏԱՍՆՈՒԹ ՏԱՐԻՆ ԼՐԱՆԱԼԸ, ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ –0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Սահմանել արտոնություն 2016 թվականի ապրիլյան քառօրյա և 2020 թվականի սեպտեմբերի 27-ի քառասունչորսօրյա Հայաստանի և Արցախի Հանրապետությունների պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած և օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքի՝ մինչև այդ անձանց զավակներից մեկի տասնութ տարին լրանալը, գույքահարկի նկատմամբ:
2. Հետ վերադարձնել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց պատկանող գույքի 2020 թվականի գույքահարկի գծով կատարված վճարումները:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 21-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ՋԱՆՈՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22

դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող Վազգեն Սարգսյանի 6ա հասցեում գտնվող հեռուստաաշտարակի վրա վարձակալությամբ ժամանակավոր օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու թույլտվության և ամենամսյա վարձավճարի չափը հաստատելու մասին» թիվ 21-Ա որոշումը (այսուհետ՝ որոշում) և «Չապ Քեմիքլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և Գյումրի համայնքի միջև 2014 թվականի մայիսի 01-ին կնքված պայմանագիրը համարել լուծված՝ 2020 թվականի դեկտեմբերի 01-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՉԱՊ ՔԵՄԻՔԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրեն Մկրտիչ Մարտիրոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆՇԻՐԱԿԻՄԱՐԶԻԳՅՈՒՄՐԻՀԱՄԱՅՆՔԻԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԵՐԻ 10-ի N 202-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ռ.ԱՆԴՐԻԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 22
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի վարչական տարածում տեղական տուրքերի և վճարների 2021 թվականի դրույքաչափերը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 10-ի N 216-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ն որոշման նկախաբանում «հոդվածների,» բառից հետո լրացնել ««Աղբահանության մասին» օրենքի 14-րդ հոդվածի» բառերը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի N 181-Ա ԵՎ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 207-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ –1 (Ա.Խաչատրյան)
դեմ – 20
ձեռնպահ – 2 (Լ.Բարսեղյան,Հ.Եղիազարյան)
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 26-ի և դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ սահմանելու մասին» N 181-Ա և N 207-Ա որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Որոշումը չընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ. ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի, ծախսերի և եկամուտների հետևյալ հաշվեկշռվածությամբ՝

1) եկամուտներ՝ 4 627 820.4 (չորս միլիարդ վեց հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր քսան հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ծախսեր՝ 4 627 820.4 (չորս միլիարդ վեց հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր քսան հազար չորս հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

1. Սահմանել որ՝

Համայնքի ղեկավարը համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման ընթացքում կարող է կատարել վերաբաշխումներ բյուջեով հաստատված հատկացումների ընդհանուր գումարի 10%-ի սահմաններում, սույն որոշումով հաստատված ծախսերի գործառական դասակարգման առանձին խմբերի և ենթախմբերի, ինչպես նաև ենթախմբերի ներսում, այն պայմանով, որ թույլ չտրվի սույն որոշմամբ յուրաքանչյուր ենթախմբի գծով նախատեսված հատկացումների կրճատում ոչ ավել, քան 20%-ի չափով կամ ավելացում 35%-ից ավելի չափով:

3. Թույլատրել համայնքի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված հատկացումների սահմաններում.

1) համայնքի ավագանու մշտական գործող համապատասխան հանձնաժողովի ներկայացմամբ հաստատել սոցիալական ծրագրերով նախատեսված ծառայությունների և շահառուների ցանկն ու կազմակերպել վճարումների կատարումը,

2) բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ ծախսերի (միջոցառումների կազմակերպում), նվիրատվությունների և սուբսիդիաների համար նախատեսված հոդվածներով հատկացումների վերծանումը և ծախսերի իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Հ. Կարապետյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ.Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Ա. Գրիգորյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա.Աղանյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Խաչատրյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ.Պողոսյան _____

Ա. Առաքելյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

քաղաք Գյումրի «24»

դեկտեմբերի 2020 թվական